ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի մայիսի 25-ից 26-ը ք. Սոչի գործուղման վերաբերյալ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

  Դավիթ Մելքոնյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչության փոխադրումների քաղաքականության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Ռուսաստանի Դաշնության՝ քաղաք Սոչի, 2017թ. մայիսի 25-ից 26-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  Ռուսաստանի Դաշնության Տրանսպորտի նախարարություն:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

  Անկախ պետությունների համագործակցության համակարգող տրանսպորտային խորհրդակցության խորհուրդների ամենամյա յոթերորդ նստաշրջանին մասնակցելու նպատակով:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

  ԱՊՀ անդամ պետությունների համակարգող տրանսպորտային խորհրդակցության յոթերորդ նիստը անցկացվեց ըստ առանձնացված խորհուրդների՝ տրանսպորտային անվտանգության, ծովային և ներքին ջրային տրանսպորտի, ավտոմոբիլային և քաղաքային ուղևորատար տրանսպորտի, տեղեկատվությունը տրանսպորտում, կրթության և գիտության ու միջազգային տրանսպորտային միջանցքների:

  Տրանսպորտային անվտանգության խորհրդում ներկայացվեց տրանսպորտային անվտանգության բնագավառում Հայաստանի

Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացքը՝ մասնավորապես «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջև տրանսպորտային անվտանգության ապահովման ոլորտում տեղեկատվական փոխգործակցության մասին» համաձայնագրի Հայաստանի Հանրապետության կողմից վավերացման գործընթացը: Խորհրդում ներկայացվեց նաև տրանսպորտային անվտանգության բնագավառում Հայաստանի Հանրապետության կողմից իրականացված օրենսդրական փոփոխությունները՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրությամբ հաստատված Հայաստանի Հանրապետության տրանսպորտային անվտանգության ապահովման ազգային ռազմավարությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության տրանսպորտային անվտանգության ապահովման ազգային ռազմավարության դրույթների իրականացումն ապահովող 2014-2017 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» N 305-Ն որոշումը և դրանց հիման մշակված <<Տրանսպորտային անվտանգության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարության համապատասխան մասնագետները ներկայացրեցին ՌԴ-ում իրականացված օրենսդրական փոփոխությունները ըստ տրանսպորտի առանձին տեսակների, քննարկվեց անվտանգության ապահովմանն ուղղված արդյունավետ մեխանիզմների ներդրման հարցերը:

Քննարկվեց ԱՊՀ անդամ պետությունների համակարգող տրանսպորտային խորհրդակցության տրանսպորտային անվտանգության 2016-2019 թվականների աշխատանքային ծրագրի նախագիծը (կից ներկայացվում է):

Կողմերը առաջարկեցին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը աջակցել Հայաստանի Հանրապետությունում «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջև տրանսպորտային անվտանգության ապահովման ոլորտում տեղեկատվական փոխգործակցության մասին» համաձայնագրի հնարավորինս արագ վավերացման գործընթացին, ինչը հնարավորություն կտա ԱՊՀ անդամ

պետությունների տարածքում իրականացնելու անվտանգ միջազգային ուղևափոխադրումներ:

Լիագումար նիստում ամփոփվեց (արձանագրությունը կներկայացվի ավելի ուշ) խորհուրդների կատարած աշխատանքը, այն գնահատվեց դրական և որոշվեց շարունակել աշխատանքները:

Կից ներկայացնում եմ օրակարգը և մասնակիցների ցանկը:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Դավիթ Մելքոնյան

29.05.2017թ.